

Արծրունի Ս. Սահակյան
Բանաս. գիյ. դոկտոր
Աշոտ Գ. Մանուչարյան
Պարմ. գիյ. թեկնածու
Հակոբ Ս. Խաթլամաջյան
Հեղագրորդ
Սասուն Մ. Հարությունյան
Պարմ. գիյ. թեկնածու

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՄԵԾ ՍԱԼԱ ԳՅՈՒՂԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր մանրամասներ Սիմոն Վրացյանի տոհմի ծագման մասին*

Բանալի բառեր – արձանագրություն, հայկական, գյուղ, գերեզմանոց, տապանաքար, սկզբնաղբյուր, գիտական, տեղեկություն, պատմություն, ուսումնասիրություն:

Մեծ Սալան Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի հայկական հինգ գյուղերից մեկն է, որոնք Դոն գետի տարբեր վտակների վրա հիմնել են 1778 թ. Ղրիմի թերակղզուց մերձդոնյան տափաստաններ գաղթած հայերը: Հայ ականավոր քաղաքական-պետական գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ, ծագումով մեծապալացի Սիմոն Վրացյանի հավաստմամբ՝ գաղթյալների «ընտրությիւնը ընկնում է Դոն գետի աջ եզերքի վրայ, որ դիրքով ու տեսարաններով Խրիմն էր յիշեցնում մի քիչ»¹:

Հայտնի է, որ ղրիմահայերն այդ նոր վայրերում հիմնադրած գյուղերը հիմնականում կոչել են իրենց նախկին բնակավայրերի անուններով²: Մասնավորապես՝ սալացիները, ակաղ. Վ. Բարխուդարյանի պարզաբանմամբ,

*Սույն աշխատանքը կատարվել է Նոր Նախիջևանի հայ համայնքին և այլթնիկ միջավայրի հետ նրա կրոնամշակութային կապերին նվիրված պատմա-ազգագրական հետազոտության շրջանակում, որը ֆինանսավորել է Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդարանը, ՀՀ Գիտություններ: Ընդունվել է տպագրության 15.01.2019:

¹ Վրացյան Ս., Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Ա., Պէյրոյթ, 2007, էջ 13:

² Տե՛ս Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Եր., 1967, էջ 54:

«իրենց հետ միացնելով մի քանի մանր գյուղերի բնակիչներ, հաստատվում են միևնույն տեղում և նոր գյուղը անվանում Մեծ Սալա»³:

«Սևծովյան մեղմ կլիմա ու գրավիչ բնություն ունեցող երկրից գաղթողները, ընկնելով Դոնի անմարդաբնակ, խստաշունչ տափաստանները»⁴ որքան էլ անսովոր ու դժվար լիներ, այնուհանդերձ կարողացան համակերպվել նոր պայմաններին, հաստատուն արմատներ գցել տեղում՝ ծաղկեցնելով ու շենացնելով նորաստեղծ բնակավայրերն ու հարակից տարածքները: Այդ գործընթացին իր նպաստը բերեց Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակը, որով հայերին տրվում էին տնտեսական, առևտրական, տեղական ինքնակառավարման, ազգային-կրթական, եկեղեցա-դավանական և այլ արտոնություններ: Դրանք նպաստում են Մեծ Սալայի զարգացմանը, բնակչության թվաքանակի պարբերական աճին, ինչն ակնբախ է վիճակագրական տվյալներից: Այսպես, եթե 1793 թ. Մեծ Սալայում ապրում էր 262 մարդ, ապա 1835 թ. բնակչության թիվը հասնում է 695-ի, իսկ 1850 թ.՝ 949-ի⁵: Հարյուր տարվա ընթացքում Մեծ Սալայի բնակչությունը տասնապատկվում է՝ 1897 թ. դառնալով 2879, իսկ 1907 թ., հասնելով 3357 մարդու⁶: Վ. Բարխուդարյանի հավաստմամբ՝ արդեն «1913-1914 թթ. Մեծ Սալան ուներ 4191 բնակիչ»⁷:

Ս. Վրացյանն իր ծննդավայր Մեծ Սալան համարում է «գիւղերի մէջ ամէնից հարուստը և ամէնից քաղաքակիրթը...Փոքր Փարիզ էին կոչում՝ ոմանք հեգնանքով, ուրիշները՝ հպարտութեամբ»⁸: Իսկ այդ գյուղում, որ կոչվել է նաև Բախչի-Սալա, XIX դ. 70-ականներին ապրում էր գեղեցկուհի Մաշան (Մարիամ Կունդուպյան), որի տեսքից զնայված տագանրոզցի գիմնագիական պատանի՝ հետագայում մեծ գրող Ա. Չեխովը, դեռատի աղջկա գեղեցկությունը որակում է որպես դասական ու կատարյալ⁹:

Գյուղամիջյան մեծ հրապարակում այսօր էլ կանգուն է Ս. Աստվածածին եկեղեցին: Ս. Վրացյանի վկայությամբ՝ Ս. Աստվածածնի կողքին արական յոթնամյա դպրոցն էր՝ մոտ 500 աշակերտով, գյուղում կար նաև իգական հնգամյա դպրոց և ենթագիմնագիա¹⁰: Վ. Բարխուդարյանի տվյալներով՝ 1896 թ. իգական դպրոցում սովորում էր 60 աշակերտուհի¹¹:

Ս. Աստվածածին եկեղեցու «ներսի պատերին,– գրում է վիճագրագետ Գր. Գրիգորյանը,– պահպանվել են նորագույն շրջանի որմնանկարներ, որոնցից երկուսի տակ կան արձանագրություններ:

Հյուսիսային որմնապատկերի տակ՝

ՅԻՇԱՏԱԿ Է Ս[Ա]Վ[ՏԵՍ]Ի ԲԱԴԴԱՍԱՐԷ ՄՀԻԱՆՑ ՄԲ ԱԾԱԾՆԱ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՄԵԾ ՍԱԼԱՅԻ 1892 ԱՄԻ, 2-Ն ՆՈՅԵՄԲԵՐԻ:

Հարավային որմնապատկերի տակ՝

3 Նույն տեղում: Դատելով գյուղանվան ռուսական տարբերակի հոգնակիակերտ ձևից՝ Большие Салы, կարելի կարծել, որ նախկին դրիմյան տեղանունը եղել է հոգնակի վերջավորությամբ՝ հունարենից կամ թաթարերենից (Սալ+այ), որը հայերենը դարձրել է եզակի (Սալա):

4 Նույն տեղում, էջ 73:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 123:

6 Տե՛ս Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Եր., 1985, էջ 73:

7 Նույն տեղում:

8 Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 15:

9 Տե՛ս Չեխով Ա., Գեղեցկուհիներ, Երկեր, հատ. III, Եր., 1961, էջ 5-15:

10 Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., նույն տեղում:

11 Տե՛ս Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), էջ 303:

ՅԻՇԱՏԱԿ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՄՇԻԵԱՆՑ Հ. ՄՕՐԻՆ ՄԼԱՂՍԵՍԻ ՄԱՐԹԱՅԻ ԴՎԻՆ ՄԲ ԱԾԱԾՆԱ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԾ ՍԱԼԱՅԻ 1893 ԱՄԻ, 2-Ն ՆՈՅՆԵՄԲԵՐԻ»¹²:

Մեծ Սալայի մյուս արձանագրությունները պահպանվել են գյուղի գերեզմանոցում: Այդտեղ վիմագրական նյութը հիմնականում նորագույն շրջանից է (XIX դ. – XX դ. սկիզբ). չկան գյուղի հիմնադիր սերնդի տապանագրություններ, սակայն առկա փաստագրերը կարևորագույն սկզբնաղբյուրներ են հայկական Մեծ Սալա գաղթօջախի պատմության ուսումնասիրության համար: Բացի այդ, արձանագրությունները, հիմնականում փորագրված լինելով ավազաքարե տապանաքարերի վրա, երկարակյաց չեն. ժամանակի ընթացքում եղանակային ազդեցության, այցելուների քայլերի շփման արդյունքում դրանք դյուրությամբ քայքայվում են, ջնջվում, դառնում անընթեռնելի՝ ընդմիջտ մաքրելով ուշագրավ անձանց հիշատակներ, պատմական դրվագներ:

Տեղի արձանագրությունները հավաքել է Գր. Գրիգորյանը 1967 թվականին¹³: Դրանց մի մասը մենք չգտանք, հավանական է՝ մի քանիսը ծածկվել են հողի շերտով: Հավանաբար հիսուն տարի առաջ հողով, թավ խտտով, կամ խիտ մացառներով ծածկվել են նաև այն տապանաքարերը, որոնց մակագրություններն անհասանելիության պատճառով տեղ չեն գտել հայ վիմագրագիտության երախտավոր Գր. Գրիգորյանի աշխատասիրությամբ կազմված ժողովածուում:

Ընդհանուր առմամբ Մեծ Սալա գյուղի գերեզմանոցում ընդօրինակել ենք հետևյալ արձանագրությունները.

1. **Տապանաքար**, գորշավուն ավազաքարից, 6 տող.



12 «Դիվան հայ վիմագրության», պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխ.՝ Գր. Գրիգորյանի, Եր., 1999, էջ 153 (այսուհետև՝ «Դիվան», պր. VIII և էջը):
 13 Տե՛ս նույն տեղում:

ԾՆԵԱԼ Է 1871 ԴԻՎԻՆ / ՄԵԾ ՍԱԼԱ ԳԻԻՂՈՒՄ / ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԿՕՍՈՎ / ՏԱՅՊԻՉԻՕՎ, / ՎՕՂՃԱՆԱԾ Է 1914-ԻՆ, / ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ¹⁴:


Գրվածքում երկիցս գործածված են տեղական բարբառային ձևեր. ԴԻՎԻՆ՝ փոխանակ թՎԻՆ և ՎՕՂՃԱՆԱԾ՝ փոխանակ ՎԱԽՃԱՆԱԾ: ՏԱՅՊԻՉԻՕՎ նախկինում ընթերցվել է ՊԱՅՊԻՉԻՕՎ:

2. **Սալատապան**, ջարդված երկու կտորի, 4 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ /
ԱՐԹԵԻՆ՝ ԱԶՆԻԻ /
ԳԱՌԻԻՆ ԳԱՅՐԻԷԼԻ, /
1911 ԹՎԻՆ:

Տապանագրությունում առկա են կրճատումներ, հիմնականում՝ ձայնավորների:

3. **Տապանաքար**, գորշ ավազաքարից, մանռապատ, 6 տող.



ԱՄՏ / ՀՂԱՆԳՉԻ / ՄԱՐՄԻՆ /
ՅԱՐՈՒԹԻՒՆ / ԶԻՔԹԱԶԵԱՆ՝Ի:

Ժամանակակից է նախորդներին:

4. **Տապանաքար**, գորշ ավազաքարից, 7 տող.

ԱՍ Ն ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ
ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄՈՎՍԵՍԻ
ԿԱՐԱՊԵՏՆԵԱՆ
ԲՈՍՏԱՆՁԵԱՆ ԶՆԵԱԼԻ
1881 ԱՄԻ ՎԱԽՃԱՆԱԿ
Ի ԵՍՄԱՐՏԻ 1901
ԱՄԻ

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ /
ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄՈՎՍԵՍԻ /
ԿԱՐԱՊԵՏՆԵԱՆ / ԲՈՍՏԱՆՁԵԱՆ,
ԾՆԵԱԼ Ի / 1881 ԱՄԻ, ՎԱԽՃԱՆԱԿ /
Ի 6-Ն ՄԱՐՏԻ 1901 / ԱՄԻ:

Քսանամյա երիտասարդ Մովսես Բոստանջյանի ու նրա ցնցող մահվան մասին իր հուշերում պատմում է Սիմոն Վրացյանը: Մովսեսը Վրացյանի վաղ երիտասարդական տարիների ընկերն ու գաղափարակիցն էր, որի սիրելի հիշատակին հայ ազգային նշանավոր գործիչը նվիրել է պատմվածք՝ «Սասունի ազատությունը»¹⁵: Մովսեսը «Մեծ Սալա գիւղի հարուստ ընտանիքի զավակ էր...Լեռների մարալի պէս սիրում

¹⁴ Նույն տեղում:
¹⁵ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 60-67:

տղայ էր Մովսէսը: Մատաղ բարդիի պէս սլացիկ, նուրբ կազմուածքով, առածգական ու ձկուն մարմնով, ծով գոյն խոշոր ու թափանցող աչքերով, սէգ քայլուածքով աննման մի պատկեր: Զուարթ, զուարճախոս, թովուուն եւ, շուտով պիտի համոզուէի, նաեւ անզուգական ընկեր...

Մէկ վիշտ միայն ունէր Մովսէսը – մեծ վիշտ: Հօր միակ զաւակն էր, եւ հայրը գիւղի անուանի աղաներից էր: Ինքնակալ ու կամակոր: Հարուստ ու աւելի մեծ հարստութեան ձգտող: Ուզում էր, իր տղան էլ իր պէս լինէր»¹⁶: Բայց Մովսէսն ուրիշ էր, ապրում էր այլ ստորումներով: Նա ու Սիմոն Վրացյանը որոշել էին Սասուն մեկնել՝ ազգային-ազատագրական կռիւներին մասնակցելու համար: Այդ նպատակով Մովսէսը գնել էր երկու «Մաուզեր»՝ իր ու Սիմոնի համար:

Սիմոն Վրացյանը Նոր Նախիջևանի թեմական դպրոցն ավարտելուց հետո սովորելու է գնում Էջմիածնի Գևորգյան ձեմարան: Զատկի տոներին նրա մոտ պետք է գային Մովսէսը և նրանց երրորդ ընկեր Ստեփանը՝ Սասուն մեկնելու համար: Սակայն մի օր Վրացյանը Ստեփանից նամակ է ստանում, որում նամակագիրը մեծ թախիծով գուժում է Մովսէսի անսպասելի մահվան բոթն ու ներկայացնում ողբերգության պատմությունը: Հայրն իմանում է որդու ծրագրերի մասին: Մի քանի իրեր է գտնում մոտը՝ հեռադիտակ, դաշույն: Զայրացած հայրը «մէկ ապտակով Մովսէսին ձգում է գետնին: Յետոյ՝ սկսում է կօշիկներով անխնա հարուածել, հայիոյել ու հարուածել ...Մովսէսը մի ոստիւնով դուրս է նետում: Ու մի քանի վայրկեան վերջը, ախտից լսում է ատրճանակի պայթիւն ...Վրայ են հասնում: Մովսէսը արիւնջուայ ընկած էր ախտոմ: Գնդակը փշրել էր գանկը եւ ուղեղը ցրիւ տուել: Մօտը ընկած էր ատրճանակը, այն ատրճանակը, որով պիտի ազատէր Սասունը...

Ստեփանը գնացել էր Մովսէսի յուղարկաւորութեան: Ամբողջ գիւղը ներկայ է եղել, բացի Մովսէսի հօրից...

Մի օր էլ նամակ առի Ստեփանից.-

Մովսէսի պապան մեռել էր սրտի ցաւից »¹⁷:

Ուշադրության արժանի է փաստը, որ Սիմոն Վրացյանը ոչ մի պարագայում չի հայտնում մինուծար որդուն ողբերգական մահվան հասցրած հոր անունը, հավանաբար անգութ ծնողի անվանական հիշատակը պատմության մեջ չպահպանելու համար, ինչպէս նման դեպքերում երբեմն վարվել են մեր պատմիչները: Բայց, միևնույն է, տարաբախտ Մովսէսի տապանագրությունից իմացվում է հոր անունը՝ Կարապետ: Տապանաքարին նշված չէ նաև Մովսէսի ծննդյան ամսաթիվը: Մեծ Սալա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական մատյանում Մովսէս Բոստանջյանի ծնունդը գրառված է 1881 թ. հոկտեմբերի

ԼԿՂ 26-ին:

ԱՆԳՁԻ ՄԱՐՄԻՆ

ՅԱԿՊԿԱՅ

ՈՒԿԵԱՆ

ԲՕՍԵԱՆՁԵԱՆ

1887 թ. 4.

1890 ա Ի


5. **Տապանաքար**, սպիտակավուն ավազաքարից, 7 տող.

ԱՍՏ / ՂԱՆԳՁԻ ՄԱՐՄԻՆ / ՅԱԿՈՒԿԱՅ / ՄԱՆՈՒԿԵԱՆ /

ԲՕՍԱՆՁԵԱՆ / 18-Ն ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1880 ԱՄԻ:

Մովսէսի ազգականներից է՝ Բոստանջյան տոհմից:

16 Նույն տեղում, էջ 61:
17 Նույն տեղում, էջ 67:



6. **Տապանաքար**, գորշավուն ավազաքարից, 6 տող:

ԱՍՏ ԸԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ՄԱՀՏԵՍԻ ԵՒԱ / ԻՍԱՀԱԿԵԱՆ / ԲՈՍԱՆԶԵԱՆՑԻ, / ՎՕԻՃԱՆԵԱԼ Ի 1899 / ԱՄԻ:

Ննջեցյալը նույնպես Բոստանջանների հարուստ գերդաստանից է:

Նորնախիջևանցիներին, առհասարակ դոնահայերին ի մոտո քաջածանոթ Երվանդ Շահազիզն ուշագրավ տեղեկություններ է հայտնում տեղի մահտեսիների պահով. «Նախիջևանցիք հեռաւոր ուխտագնացութիւն կատարում են, գնալով Երուսաղէմ, Սշոյ ա. Կարապետ և ս. Էջմիածին: Նոքա շատ են սիրում «հաջի»¹⁸ դառնալ, ուստի և իւրաքանչիւր նախիջևանցու մեծ բաղձանքն է, երբ նա հասակն առնում է, գնալ ս. քաղաքը, տեսնել ս. գերեզմանը, ս. գլխադիրը և արժանանալ ս. լոյսի տեսութեան: Սովորաբար գնում են բարեկենդանին, մնում են ս. Յակովբում ամբողջ Մեծ պատը, տեսնում են զատկական հանդէսները և վերադառնում են տուն, բերելով իւրանց հետ «Քետ յորդանայ» և ուրիշ սովորական բաներ: Ս. Էջմիածին նոքա գնում են առհասարակ մեռնօրինէքին Հայաստանեայց եկեղեցու այդ նուիրական հանդիսին ներկա գտնուելու, ս. մեռնի կաթսան համբուրելու և պչոլ ս. մեռնի եփ եկածը տեսնելու, իսկ ս. Կարապետ գնում են նշանուածները, որովհետև նախիջևանցի կտրիճներն իրեանց «մուրազին» հասնելու համար համարես թէ միշտ ուխտած են լինում ս. Կարապետի գերեզմանը համբուրելու»¹⁹:



7. **Տապանաքար**, մետաղաձուլյ, թուջե, ելնդագիր, 5 տող.

ԱՍՏ ԸԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ՆԵՐՍԷՍ ԽԱՉԳՐՈՒԶԵԱՆ / ԽԼԻԵԱՆՑԻ, / ՎԱԽՃՄԱՆԵԱԼ 7-ԻՆ՝ 3ՈՒԼ ԻՄԻ 1900 ԱՄԻ, / 38 ԱՄԱՃՅՈՒՆՆԵՐԻ 38 ա:

Այստեղ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել Ներսեսի հայրանվան՝ Խաչգրուզի վրա: Բանն այն է, որ այդ անվան երկրորդ բաղադրիչը՝ գրուզը, Սիմոն Վրացյանի տոհմական ազգանվան արմատն է (Գրուզյան, Գռուզյան): Նոր Նախիջևանի Ս. Համբարձում թաղի ծխական դպրոցում ուսանելու ժամանակ ուսուցիչներից մեկը, ինչպես իր հուշերում գրում է նշանավոր քաղաքական-պետական գործիչը, Գրուզյան տոհմանվան մեջ նմանություն տեսնելով վրացի բառի հետ, կամայականորեն աշակերտի ազգանունը փոխում է Գրու-

18 Արաբ. حاح ' մուսուլման ուխտագնաց:

19 **Շահազիզ Ե.**, Նոր-Նախիջևանը և նոր-նախիջևանցիք, Թիֆլիս, 1903, էջ 180:

20 «Իրվան», պր. VIII, էջ 153:

զինյան, որ հետո թարգմանվում է հայերեն՝ Վրացյան²¹: Մինչդեռ, իրականում, գրուզը վրացու հետ ոչ մի կապ չունի. այն լատիներեն **crux** (խաչ) բառի հայերեն խոսվածքային արտասանության ձև է: Ըստ այդմ, Գրուզյան պետք է փոխվեր Խաչյան: Այս ազգանունն այսօր էլ կա Արցախում, պատմականորեն էլ ներառված է ներսիսյան կամ կեղծ գահնամակում²²: Ի դեպ, Խաչգրուզ հայրանվան մեջ երկու արմատների նույնիմաստ կրկնությամբ կարծես գաղտնազերծվում է գրուզի խաչ իմաստը: Դրանից էլ մակաբերվում է, որ Գրուզյանների անեցի նախնիները հրաշալի իմացել են գրուզի խաչ նշանակելը, ինչպես նաև միջնադարյան դրինահայերը, որոնց մեջ ամենանշանավորը Խաչգռուզ գրիչն է, ով իր անունը հավերժացրել է հայրենների հայտնի ժողովածու կազմելով: Նույնը չի կարելի ասել նրանց մեծապալցի ժառանգների մասին, որոնք կարծել են, թե իրենց տոհմանունն առաջացել է «գռուզ» (գանգուր) մազեր ունենալու պատճառով²³:

Ինչ վերաբերում է տապանաքարը մետաղից պատրաստելու մշակույթին, ապա ազգագրագետ Գերենիկ Վարդումյանի դիտարկմամբ՝ «արժե նշել, որ համապատասխան շինաքարի բացակայության պատճառով, այստեղի հայերը գրեթե կորցրել են դեռևս հնից եկող և մինչև օրս էլ Հայաստանում տարածված բարձրարվեստ գերեզմանաքարեր պատրաստելու կուլտուրան: Մյասնիկյանի շրջանի գյուղական գերեզմանոցներում խիստ հողմահարված գերեզմանաքարերի կողքին XIX դ. կեսից սկսել է տարածում ստանալ երկաթասալե հուշարձանը»²⁴: Ազգագրագետն անձամբ պարզաբանում է պատճառը. տեղում առատորեն հայթայթվող շերտաքարը խիստ փխրուն է և շուտ հողմահարվող²⁵: Նույնը չի կարելի ասել, իհարկե, Նոր Նախիջևանի մասին, որտեղ կան մարմարյա ու գրանիտե մեծարվեստ շատ գերեզմանակոթողներ:


Վերոնշյալ թուջե տապանաքարն այսօր տեղում չէ, գողացել են: Գյուղի տարեցների ասելով՝ նախքան Հայրենական մեծ պատերազմը (1941-1945) Մեծ Սալայի գերեզմանոցում եղել է նմանապիսի 8-9 տապանաքար, իսկ այսօր՝ ոչ մի հատ: Գերեզմանաքարերը Մեծ Սալայում տեղադրել են թաղումից մեկ, նույնիսկ երեք տարի անց. «Հողը պետք է երեք անգամ սառչի ու հալչի, որպեսզի հուշարձանը չթեքվի», - ասում են գյուղի տարեցները:



8. **Տապանաքար**, գորշավուն ավազաքարից, նախորդի ձախ կողքին, 6 տող.


ԱՍՏ ՀԱՆԳՉԻ / ԾԱՂԿԱՆԱՍԱԿ ԿՈՅՍ ՍՈՓԵԱ / ՓԱՆՈՍԵԱՆ ԵՐԿԱՆԵԱՆ, / ԾՆԵԱԼ Ի 1890 ԱՄԻ ԵՒ / ՎԱԽՃԱՆԵԱԼ 1905 ԱՄԻ / Ի 15 ՅՈՒՆԻՍԻ:

21 Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Բ., Պէյրութ, 2007, էջ 8-9:
 22 Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 2, Եր., 1976, էջ 663:
 23 Տե՛ս Բալյան Ա., Միմոն Վրացյանի հասարակական-քաղաքական և պետական գործունեությունը, Եր., 2013, էջ 7:
 24 Վարդումյան Գ., Ռոստոփի մարզի հայերի մշակույթի և կենցաղի նմուշներ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», N 10, Եր., 1961, էջ 92, տողատակ:
 25 Տե՛ս նույն տեղում, էջ 92:



9. **Սալատապան**, 6 տող.
ՅԻՇԱՏԱԿ Է / ՀԱՆԳՈՒՅԵԱԼ / ՍՈՒՐԲՈՒՇԻՆ՝ / ԿԻՆԸ
ԾԱՌՈՒՄԿԻԱՐԱՊԱՃԱՄԵԱՆԻ²⁶, 1894:

Թեև ննջեցյալի անվան վերջին տառը չի պահպանվել, սակայն, կարծում ենք, որ վերծանությունը պետք է լինի ծառուկ. այդ տարածված անձնանուն է դոնահայերի շրջանում:





10. **Տապանաքար**, սպիտակավուն ավազաքարից, 1 տող.

Թվին 1863:

Ուշագրավ է, որ թվականի հազարավոր 1-ը կցագրված է Թ տառի աջ սյունագծին: Տապանաքարի պատկերագրությունում Գողգոթային հառնող փրկչական խաչն ունի ռուսական ազդեցություն:

11. **Արձանագիր աղյուսներ**, գերեզմաններից մեկում, յուրաքանչյուրին՝ մեկական ռուսերեն տառ.



A, E, T:

Այս աղյուսներն ու գրերը, առավել ևս գերեզմանոցում, թերևս ուշադրության չէին արժանանա, եթե անմիջական առնչություն չունենային Մեծ Սալայի պատմության հետ: Վ. Բարխուդարյանի վկայությամբ՝ Դոնի «հայկական գյուղերը, բացառությամբ Փոքր Սալայի, ունեցել են աղյուսի սեփական գործարաններ և ազատ են եղել այն ձեռք բերելու համար Նոր Նախիջևան մեկնելու անհրաժեշտությունից»²⁶: Նրա պարզաբանմամբ՝ «Աղյուսի, կղմինդրի արտադրությունը կապված լինելով շինարարության պահանջների հետ, բնականաբար, հիմնվել է գաղութի սկզբնավորման առաջին տասնամյակում: Հետագայում շինարարության ծավալման հետ մեկտեղ աստիճանաբար

26 Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861–1917 թթ.), էջ 100:

ընդարձակվել է արտադրությունը: Կավահողից ստացվող շինանյութերի այս ճյուղի արտադրությունը լայն առումով շուկայական նպատակներ չի հետապնդել: Այն արտադրվել է տեղի բնակչության կարիքները բավարարելու համար, կամ էլ սպառվել է արտադրության մոտակա բնակավայրերում: Այդ պատճառով էլ աղյուսի և կղմինդրի արտադրությունը տևական ու կայուն բնույթ է կրել... Աղյուսի արտադրությունը հետևողականորեն ընդարձակվել է: Սակայն կղմինդրի արտադրությունը ...աստիճանաբար նվազել է՝ շենքերի տանիքների կղմինդրը հաճախ թիթեղով փոխարինելու հետևանքով: 1863 թ. աղյուսի 9 գործարանները թողարկել են 57.560 ռուբլու, իսկ 1884 թ. արդեն 11 գործարանները 98.500 ռ. արտադրանք: Կղմինդրի արտադրությունը 1863 թ. հասել է 4.500 ռ., իսկ քսան տարի անց ոչ թե բարձրացել, այլ իջել է 610 ռուբլու»²⁷:

Վերոհիշյալ տառերն այդ 9 կամ 11 գործարանների տարբերակիչ նշաններն են:

Ս. Վրացյանի նկարագրությամբ՝ Մեծ Սալա «գիւղի տները քարից էին, աղիւսից կամ հաստ տախտակից՝ թիթեղէ կամ կղմինդրէ տանիքներով, ամուր ու հաստատուն»²⁸:

12. **Տապանաքար**, գորշավուն ավազաքարից, 2 տող.

ԿՈՒԶՄԱՅԻԿ / ԽԱՐԱՊԱՃԱԽԵԱՆ:

ԿՈՒԶՄԱՅԻԿ

ԽԱՐԱՊԱՃԱԽԵԱՆ

Թվագրվում է XIX դ. վերջով – XX դ. սկզբով: Կուզմայիկ անվան «իկ» փաղաքշական վերջածանցը հուշում է, որ նա վախճանվել է փոքր հասակում: Կուզմայիկը վերոհիշյալ Սրբուհի և Ծառուկ Խարապաճախյանների հարազատներից է:

13. **Տապանաքար**, նույնատիպ, 5 տող.

ԱՄՍ ԳԱՆԳՔ Ի

ԽԱՆՆԱՆՈՒՐ ԱՄՍ

ԱՄՈՒՐՈՎ ԵՕԿԱՆԵԱՔ

ԹՄԻՆ 1905ԻՆ

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ/ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՍՎ/ԱՏՈՒՐՈՎ

ՉՕՊԱՆԵԱՆ, / ԹԻՎ, ՄԵՂՆ. 1907-ԻՆ /

ՕԿՈՍՈՍԻՆ-22-ԻՆ:

Արձանագրությունում գերակշռում են բոլորգրերը: Չոբանյանները Մեծ Սալայում հայտնի տոհմ էին: Այդ տոհմի միջոցներով է կառուցվել գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին: Չոբանյան տոհմից է եղել Ս. Վրացյանի հայրենասեր հայուհի մայրը: Վրացյանը հիշում է իր քեռի Մկրտիչ Չոպանովին կամ Չոպանենցին, որին անվանում է Միքիշքա դայի (թուրք. քեռի): Նա Մեծ Սալայի ավագ գյուղապետն էր՝ օդամանը (ատամանը), ինչպես կոչում է Ս.

27 Նույն տեղում:

28 Վրացյան Ս., նշվ. աշխ., հատ. Ա, էջ 16:

Վրացյանը. շատ հարուստ էր, ունեցել է հարյուր հազար գլուխ ոչխար, գյուղի ծայրին այլուրի հինգհարկանի հսկա գործարան²⁹:

Այդ գերդաստանի մեկ այլ ներկայացուցիչ՝ Է. Չոբանյանը 1914 թ. «հայրենի գյուղին է նվիրում 15 հազար ռուբլի արժողությամբ հիվանդանոցի շենք»³⁰:


14. **Տապանաքար**, նույնատիպ, ձախ հատվածի մի մասը ջարդված, 8 տող.



Ի ՏԱՊԱՆ Ի ԿԱՍՏ / «ԸԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / «ՎԱՂԱԹԱԹԱՄ / «ԱՐՏԷՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ / ...ԵԱՆ, ԾՆԵԱԼ / «2՝5 ՏԵԿՏԵՄԲԵՐԻ, / ՎԱԽՃԱՆԵԱԼ ...3-Ը ԱՊՐԻԼԻ / 1827- ԻՆ:

Հանգուցյալի ծննդյան ամիսը համառոտագրված է ընդամենը երկու տառով՝ ՏԵ, որը կարելի է վերծանել նաև լՍԵՊՏԵՄԲԵՐԻ: Դժվարություն է հարուցում ազգանվան վերծանությունը: Մեծ Սալայի ամենահին տապանաքարն է: Մահվան թվականից ենթադրելի է, որ ննջեցյալը կան Դրիմից ներգաղթածներից է, կան էլ նոր բնակավայրում առաջին ծնվածներից:

15. **Տապանաքար**, նույնատիպ, 7 տող.



ՏԱՊԱՆՍ / ԱՅՍ Է ՀԱՆԳՐՎԱՆ / ԱԲԷԼ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ / ԴԵՄԻՐԵԱՆ, / ԾՆԱԻ..., ՄԷՌԱԻ 1888-ԻՆ, / 53 ՏԱՐԻ:

Թեև ծննդյան թիվը չի երևում, բայց հստակ է, որ այն 1835 է (1888-ից հանում ենք 53): Վերջում երևում են երեք տառամասնիկներ, որոնցից հասկացվում են տապանաքարը դնողի կամ արձանագրությունը

փորագրողի անվան սկզբնատառերը:

1906 թ. Նոր Նախիջևանի թեմական դպրոցի աշակերտության շահերի հասարակական չորս պաշտպաններից մեկն այդ տոհմից Մ. Դեմիրյանն էր, ով կոչ է արել հասարակությանը՝ բողոքելու դպրոցի վարչության կողմից մարդկային տարրական իրավունքները ոտնահարելու դեմ³¹:

29 Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., հատ. Բ, էջ 70-71:

30 Բարխուդարյան, Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), էջ 59:

31 Տե՛ս նույն տեղում, էջ 243-244:

16. **Տապանաքար**, նույնատիպ, մամռապատ, 9 տող.

ԱՍՏ
ՀԱ
ՄԱՐՄԻՆ
ՓՆՃԻԿ ՄՈ/ՏՈՆՊՕԵՎ,
ՎԱԽՃԱՆԵԱԼ /
1875 ԹՎԻ / ՅՈՒՆԻՍԻ / 25-ԻՆ:
Այստեղ փարատվում է այն զարմանքը, թե ինչու
ռուսական կամ թաթարական ազգանվանաձևեր չեն
հանդիպում:

ԱՍՏ / ՀԱՆԳՃԻ / ՄԱՐՄԻՆ / ՓՆՃԻԿ ՄՈ/ՏՈՆՊՕԵՎ,
/ ՎԱԽՃԱՆԵԱԼ /

1875 ԹՎԻ / ՅՈՒՆԻՍԻ / 25-ԻՆ:

Այստեղ փարատվում է այն զարմանքը, թե ինչու
ռուսական կամ թաթարական ազգանվանաձևեր չեն
հանդիպում:

17. **Տապանաքար**, նույնատիպ, 7 տող.

1902 ՆՊԱԳԿ ՏԵ
ՏՄՁԻԵՐՈՒԿԱՆ
ՄՄԻԱՔԱՆ

ԱՍՏ / ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ / ՅՈՒԷՀԱՆՆԻՍԻ /
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ /

ԼՈՒՍԲԻՔԱՅԵԱՆ, / 1854-1908 ԱՄԻ³²:

Միմոն Վրացյանն իր հեղափոխական ուսուցիչ
է համարում Լուսբիքայան տոհմի ներկայացուցիչ
Սահակին ու գեղարվեստորեն կերտում նրա կեր-
պարը. «Ջարմանալի մարդ էր այս Սահակ աղան:

Գիւղի ամենահարուստ մարդը լինելու բոլոր տուեալները ունէր, բայց
Քրիստոսի բարեկամ Ղազարոսից էլ աւելի աղքատ էր: Տուն ունէր, արտ
ունէր, կին ու զաւակներ ունէր, բայց իր աչքն ու միտքը դուրսն էին: Գիրք
ու լրագիր էր կարդում: Օրն ի բուն «հաւասարակի» գործերով էր զբաղուած:
Գիւղում սպառողական խանութ եւ գիւղատնտեսական ընկերութիւն էր
հիմնել: Անհանգիստ եւ որոնող հոգի ունէր ... Միակ մարդն էր կարծեմ Մեծ
Սալայում, որ «փշթով» ունէր, եւ հպարտ էր իր ատրճանակով:

Մէկ խոսքով՝ Սահակ աղան արտասովոր մարդ էր: Հակառակ իր յիսունի
հասնող տարիքին, միշտ ջահել-ջուհուլի հետ էր ժամանակ անցընում...»³³:

18. **Տապանաքար**, նույնատիպ, 6 տող.

Ի 1902 ՀՈՒԼԻՍԻ / 15-ԻՆ /
ԱՍՏՈՆ ՄՈՏ ՓՈԽԵՑԱԿ /
ՄԱՐՏԻՐՈՍ / ԲՈՎԻՉ / ՂՈՒՍՊԻԳԱԵԱՆ:

Արձանագրությունում կան համառոտագրություններ: Սա հավանաբար
վերը նշված Հովհաննես Լուսբիքայանի հայր Մարտիրոսն է:


ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԷՎ համահայկական հանդես


32 «Գիվան», սյր. VIII, էջ 153:
33 Վրացյան Ս., նշվ. աշխ., հատ. Բ., էջ 11, հատ. Ա, էջ 60-61:

19. **Տապանաքար**, նույնատիպ, 3 տող.



1902-ին վԱԶԳԷՆ /
ԷՄՋԷՆԹՈՂԵԱՆ, /
ԱՄԵԱ ՔՍԱՆ:

20. **Տապանաքար**, նույնատիպ, 7 տող.



ԱՍՏ ՇԱՆԳՂԻՒՄ / ՄԱՐԿՈՒՄ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
ՅՈՎՀԱՆՆԷՍԻԱՆ ՕԹԱՐԵԱՆՅ, ՎԱԽՃԱՆԵԱԼ /
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ն / 1899 թ.՝ 67 ԱՄ:


21. **Տապանաքար**, նույնատիպ, 6 տող.

ԱՄ ԱՄՓՈՓԻ ՄԱՐԿՈՒՄ
ՅՈՒՍԵՖԻԱՆԷ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՕԹԱՐԵԱՆՅ ԾՆԵԱԼ ԻՆ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
ՎԱԽՃԱ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

ԱՍՏ ԱՄՓՈՓԻ ՄԱՐԿՈՒՄ / ՅՈՒՍԵՖԻԱՆԷ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ / ՕԹԱՐԵԱՆՅ, ԾՆԵԱԼ Ի
1-Ն / ԴԵԿՏԵՄԲԵՐԻ... / ՎԱԽՃԱՆԵԱԼ... /
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ...

Հետաքրքրական է, որ Հուստիանեն ծնվել ու վախճանվել է միևնույն ամսին՝ դեկտեմբերին: Տարեթվերի ջնջվածության պատճառով չենք կարող ասել, թե նա ինչ ազգակցական կապի մեջ է գտնվել նախորդ տապանաքարին հիշատակվող Հովհաննեսի հետ:

22. **Տապանաքար**, նույնատիպ (ծախս ներքնամասը ջարդված), 8 տող.



ՄԱՐՍ ԸՆԴՆԳՉԻ ՄԱՐՍ/ԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ / ՄԱՐԳՍԵԱՆ / ...Խ...ԵԽԵԱՆԻ, ԿՆՈՋ / ՄԱՐՏԻՐՈՍԻ / ...ՊԵՒԵԱՆԻ, ԾՆԵԱԼ... 180?, ՎԱԽՃԱՆԵԱԼ 1902:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մարգարիտի ամուսնու անունը վերծանում ենք ՄԱՐՏԻՐՈՍ, թեև «Տ» տառը փորագրված է «Յ»-ի նման և, բացի այդ, անվանասկզբում նշմարվում են «ՄԱ» տառաշարի հետքերը: Դժվար է վերծանվում ազգանունը: Դատելով ծննդյան ու մահվան թվականների տարբերությունից՝ Մարգարիտն ապրել է երկար՝ վախճանվելով 90 անց տարիքում:

23. **Տապանաքար**, բաց գույնի ավազաքարից, 3 տող.



ԱՍՏ ԸՆԴՆԳՉԻ ՄԱՐՍ/ԻՆ ԴՇԽՈՒՎՈՒՄ ԲՈՒԲՈՆԵԱՆ / ՎԱՂՃԱՆԵԱԼ Է ՓԷՏՐՎԱՐԻ 7-ԻՆ 1912-ԻՆ:

Արձանագրությունը փորագրված է շղագիր: Ուշադրության արժանի է ՎԱԽՃԱՆՎԵԼ բառի գրությունը «Ղ» տառով, ինչը տարածված է Հայաստանի Արագածոտնի տարածաշրջանի տապանագրություններում: Այդ գրելաձևում կա այն խոր իմաստը, որ ննջեցյալը վաղ է ջանացել (Արագածոտնի տապանագրերում՝ վաղջանեցալ) Աստծու արքայություն տեղափոխվելու, որտեղ Դշխուհին դրախտային վայելքների մեջ է, ինչն ակնբախ է նրա տապանաքարի պատկերագրությունից:

ՄԱՐՍ ԸՆԴՆԳՉԻ ՄԱՐՍ-ՄԱՐՍ, 2019

ՓԷՏ (ՓԷ) ԳՐԱԿԻ, ԹԻՎ 1 (65), ԽՈՒՄԱՐ-ՄԱՐՍ, 2019

Մեծ Սալա գյուղի արձանագրություններն ամբողջացնելու համար ստորև զետեղում ենք մեր չգտած, բայց Գր. Գրիգորյանի կողմից հրատարակված վիմագրերը.

24. **Տապանաքար**, թևավոր խաչի տեսքով, պատվանդանին միայն թվականը.
1856³⁴:

25. **Երկաթաձույլ կոթող**, 2 տող.
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՎԱՂԱԹԱՌԱՄ / ԿԱՐԱՊԵՏԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ / ՏՈՄԲԱՅԵԱՆՑ. / ԾՆ. 1-Ն ՄԱՐՏԻ / 1892 ԱՄԻ. ՎԱԽՃ. 27-Ն ՕԳՈՍ. 1909 ԱՄԻ³⁵:
Այս թուջե կոթողն անհետացել է մինչև Մեծ Սալայում մեր ուսումնասիրությունն կատարելը:

26. **Տապանաքար**, գորշ ավազաքարից, 3 տող.
ՍՏԵՓԱՆՈՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ / ՏՈՄԲԱՅԵԱՆՑ / ԾՆ. 1871, ՎԱԽՃ. 24 ՓԵՏՐ.
1911³⁶:
Թվում է՝ նախորդի՝ վաղամեռիկ Կարապետի եղբայրն է:

27. **Տապանաքար**, նույնատիպ, 3 տող.
ԳԱՔՐԻԵԼ ՀԱԿՈՒԲԵԱՆ / ԴՈՄԲԱՅԱՆՑ / 1894-1910³⁷:
Ուշագրավ է, որ Ս. Վրացյանն իրենց գյուղի իր ընկերների շարքում հիշատակում է Դոմբայան տոհմի ներկայացուցիչ Ադամին³⁸:
Դոմբայանները եղել են ուսյալ ու տարածաշրջանում հարգված տոհմ: Նոր Նախիջևանի մեծահարուստների հողային ոստնձգությունների դեմ պայքարողներից էր մեծապացի Կարապետ Դոմբայանը³⁹: Վ. Բարխուդարյանի պրպտմամբ՝ «1913 թ. մամուլի գլխավոր վարչության և Ռոստովի քաղաքապետի համաձայնությամբ թույլատրվում է Ռոստովում հրատարակել «Գաղութ» շաբաթաթերթը: Խմբագիր հրատարակիչներն էին Ս. Մյասնիկյանը (Ա. Մյասնիկյանի ավագ եղբայրը) և Ա. Տոմբայանը»⁴⁰:

Ահա սրանք են ՌԴ Դոնի Ռոստովի մարզի հայկական Մեծ Սալա գյուղի՝ մեզ հայտնի ու պահպանված արձանագրությունները, որոնք կարևորագույն սկզբնաղբյուրներ են այդ գաղթօջախի պատմության, տեղի հեղինակավոր տոհմերի, դրանց նշանավոր ներկայացուցիչների գործունեության ուսումնասիրության համար: Նաև դատելով արձանագրյալ տոհմանուններից՝ շատ հետաքրքրական են առաջին հայացքից կրկնակի ազգանվան փաստերը (դա հանդիպում է Հայաստանի վիմագրերում նույնպես), որոնց մեջ իրականում առաջինը նշվող անունը՝ յան վերջածանցով, հայրանուն է, ինչը վկայված ենք գտնում դեռևս V դարից (օրինակ՝ Համագասպեան Մամիկոնեան): Դոնի հայկական վիմագրերում հայրանվանաձևերին երբեմն փոխարինում են ռուսականացված տարբերակներ՝ ով վերջածանցով:

Արծրունի Ս. Սահակյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակում են՝ լեզվաբանություն, բարբառագիտություն, բանա-

34 Տե՛ս «Դիվան», սր. VIII, էջ 153:
35 Նույն տեղում:
36 Նույն տեղում:
37 Նույն տեղում:
38 Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 6:
39 Տե՛ս **Բարխուդարյան Վ.**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), էջ 189:
40 Նույն տեղում, էջ 322-323:

հյուսություն, հայ մատենագրություն, հայ ժողովրդական քրիստոնեություն, Հայոց եկեղեցու պատմություն:

Աշոտ Գ. Մանուչարյան – հեղինակ է 3 մենագրության. զբաղվում է վիճակագրությամբ, Հայոց միջնադարյան պատմությամբ, Հայոց եկեղեցու պատմությամբ, Հայոց պատմական վանքերի և եկեղեցիների ուսումնասիրությամբ, պատմական ու ժամանակակից աղանդների հետազոտությամբ:

Հակոբ Ս. Խաթամաջյան – զբաղվում է դոնահայության պատմությամբ, ազգագրությամբ, տոհմաբանությամբ:

Սասուն Մ. Հարությունյան – հեղինակ է մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունները հիմնականում վերաբերում են աստվածաբանությանը, կրոնին, Հայոց եկեղեցու պատմությանը:

Summary

THE RECORDS OF THE GREAT SALA VILLAGE OF NEW NAKHICHEVAN

New details on the origin of Simon Vratsyans' family

Artsruni S. Sahakyan, Ashot G. Manucharyan,
Hakob S. Khatlamajyan, Sasun M. Harutyunyan

Key words – inscription, Armenian, village, cemetery, grave-stone, source, scientific, information, history, survey.

Great Sala is one of the five villages in Myasnikiyan region, Rostov Province, Russian Federation. It is on the left bank of the river Don and was founded by the Crimean Armenians who were exiled by the Empress of all Russia Yekaterina II (1762–1796). Independent of the hardships the re-settlers, who had left the mild climate of the Black Sea and picturesque countryside behind, got gradually adjusted to the harsh desert conditions of Don. Moreover, they could both turn it to blooming territories and prosper themselves. According to the facts given by academician Vladimir Barkhudaryan the population of the village rose from 262 to 4191 from 1793 to 1914. Simon Vratsyan (1882–1969), the popular Armenian political person and Statesman, the first Prime-Minister of Armenia (1918–1920) stated that his birthplace of Great Sala was one of the richest, prosperous and civilized centres among the villages. He even, half-ironically but mainly with deep pride, mentioned that it was considered to be called Petite/Small Paris.

It was supposed that Armenian epigraphic inscriptions existed in the village. In 1967 a known Armenian epigraphic professor Grigor Grigoryan in the course of expedition field works managed to collect 9 inscriptions, the two of which were from the Church of Surb Astvatsatsin/St. Holy Mother, and other 7 – from the local cemetery. The collected materials were included in “Collection of Ar-

menian Inscriptions” (VIII publication, Russian Federation, Yerevan, 1999, p.153).

In 2017 23 inscriptions were found and copied by us, 20 of which were published for the first time. Those newly found cuneiform inscriptions 50 years ago were deeply covered by thick layers of earth, grass and bushes. Due to the mentioned fact they were not revealed then and, consequently, they were not examined. The inscriptions are dated back to the mid-XIX and beginning of the XX centuries. The gravestones and grave slabs bear the names of the Armenians, the years both of their birth and death. It is interesting to mention that we can find a lot of information about Armenians and their origins in the history, namely six-volume collection by Simon Vratsyan, titled “On the Ways of Life” (Beirut, 2007).

Резюме

НАДПИСИ СЕЛА БОЛЬШИЕ САЛЫ НОВОГО НАХИЧЕВАНА

Новые подробности о происхождении рода Симона Врацяна

Арцруни С. Саакян, Ашот Г. Манучарян,
Акоб С. Хатламаджян, Сасун М. Арутюнян

Ключевые слова – надпись, армянский, село, кладбище, надгробный камень, источник, научный, сведение, история, исследование.

Большие Салы одно из пяти сел Мясниковского района Ростовской области РФ, которые на правом берегу Дона основали переселившиеся сюда по указу императрицы Всероссийской Екатерины II Великой (1762-1796) крымские армяне в 1778 г. Несмотря на трудности, переселенцы из Крыма с мягким черноморским климатом и прекрасной природой постепенно смогли приспособиться к пустынным, суровым степям Дона, сделали эти территории цветущими и развивались сами. По сведениям академика Владимира Бархударяна, население Больших Салов с 1793 г. по 1914 г. выросло с 262 до 4191 человек. Известный армянский политический, государственный деятель, последний премьер-министр первой Республики Армения (1918-1920) Симон Врацяна (1882-1969) считал место своего рождения Большие Салы самым богатым, самым цивилизованным среди всех сел, названным Малым Парижем иногда – с иронией, иногда – с гордостью.

В селе Большие Салы имеются армянские эпиграфические надписи. В 1967 г. известный эпиграфик, проф. Григор Григорян в рамках экспедиционно-полевых работ собрал 9 надписей – 2 из церкви Пресвятой Богородицы и 7 из местного кладбища. Собранные материалы были включены в «Свод армянских надписей», выпуск VIII: Российская Федерация, Ереван, 1999.

В 2017 г. на кладбище Больших Салов нами были скопированы 23 надписи, из которых 20 публикуются впервые. Несомненно, новонайденные лапидарные источники 50 лет назад были покрыты слоем земли, густой травой и кустарником, поэтому не были видны и, следовательно, были недоступны для научного исследования. Надписи в основном датируются серединой XIX – началом XX вв. На надгробных камнях и плитах высечены имена и фамилии представителей местных армянских родов, даты их рождения и смерти. Очень интересные сведения о некоторых людях и родах мы находим на страницах истории, в частности, в шеститомном сочинении Симона Врацяна «По путям жизни» (Бейрут, 2007).

REFERENCES

1. **Balyan A.**, Simon Vracyani hasarakakan-qagh'aqakan yev' petakan gorc' unet'yunə, Ye'r., 2013 **(in Armenian)**.
2. **Barxudaryan V.**, Nor Naxijevani haykakan gagh'uti patmut'yun (1779-1861 tt.), Ye'r., 1967 **(in Armenian)**.
3. **Barxudaryan V.**, Nor Naxijevani haykakan gagh'ut'i patmut'yun (1861-1917 t't'), Ye'r., 1985 **(in Armenian)**.
4. **Chexov A.**, "Gegh'etskuhiner", Yerker, hat., III, Ye'r., 1961 **(in Armenian)**.
5. "Divan hay vimagrut'yan", prak VIII, Rusastani Dashnut'yun, Ye'r., 1999 **(in Armenian)**.
6. "Haykakan sovetakan hanragitaran", hat. 2, Ye'r., 1976 **(in Armenian)**.
7. **Sh'ahaziz J.**, Nor- Naxijevanə yev' nor- naxijevantsiq, Tiflis, 1903 **(in Armenian)**.
8. **Vardumyan D.**, Rostovi marzi hayeri msh'akuyt'i yev' kencagh'i nmush'ner, HSSR GA "Teghekagir hasarakakan gitut'yunneri", N 10, Ye'r., 1961 **(in Armenian)**.
9. **Vracyan S.**, Kyanqi ugh'inerov: depqer, demqer, aprunner, hat. 1, 2, Beirut, 2007 **(in Armenian)**.